ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 189

30 սեպտեմբեր 2011թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
3. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
4. Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
5. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
6. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
7. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
8. Դիլիջանի քաղաքային համայնքում աղբահանության կազմակերպման մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 190

30 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ
ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել մեծ շուքով և տոնախմբությամբ կազմակերպել և անցկացնել Դիլիջան քաղաքում քաղաքի օրվան նվիրված միջոցառումը :

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի օրվան նվիրված միջոցառման կազմակերպում և անցկացում» աշխատանքների գնման նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891 / հատկացնել 1000000դրամ «Այլ մշակութային կազմակերպություններ» /բաժին 08, խումբ 02 , դաս 04./ 4269 հոդվածին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՄԱՆԹՐՈՍՅԱՆ*

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 191

30 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի աշխատակիցների կանոնավոր գործունեությունն ապահովելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում կատարել համալրում նոր գույքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝

1. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ.բյուջեի ֆոնդային մասի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» /բաժին 01 խումբ 01 դաս 01/ հոդված 5134 կատարել տեղաշարժ հոդված 5122 3000000 դրամ
2. Դիլիջանի քաղաքապետարանի կարիքների համար գույքի ձեռք բերման նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ.բյուջեի ֆոնդային մասի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» /բաժին 01 խումբ 01 դաս 01/հոդված 5122 հատկացնել 3000000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 192

30 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Մանթաշյան փողոցի բնակիչները հայտնելով, որ Մանթաշյան փողոցի թիվ 3 և 5 հասցեների տներին հարակից հենապատը մասամբ փլվել է և անհրաժեշտ է այն ամրացնել:

Ուսումնասիրությունից պարզվել է , որ նշված հենապատը տարիների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, փլվածքները լցվել են փողոց, ինչը խոչընդոտ է առաջացնում ավտոտրանսպորտի և հետիոտնի անվտանգ երթևեկության համար: Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել նշված աշխատանքների իրականացման համար կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Մանթաշյան փողոցի թիվ 3 և 5 հասցեների տանը հարակից հենապատի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից <Ճանապարհային տրանսպորտ> /բաժին 04, խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 300000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 193

30 սեպտեմբեր 2011թ.

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել Կալինինի 181/3 հասցեի բնակիչ Վաղարշակ Սաղրյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող ՎԱԶ-2106 մակնիշի 57 SS 859 պ/հ փոխադրամիջոցի համար 1998-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 57763 դրամ զիջելու խնդրանքով և Այգեստան փողոցի 2Ա/30 հասցեի բնակիչ Արման Հարությունյանը իրեն պատկանող շինության 2005-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 50168 դրամ զիջելու խնդրանքով:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ քաղաքացիները գտնվում են սոցիալապես ծանր պայմաններում և մուծել են գոյացած ապառքի գումարների զգալի մասը:

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Գույքահարկի գծով սահմանել արտոնություն՝

1. Դիլիջան քաղաքի Կալինինի 181/3 հասցեի բնակիչ Վաղարշակ Սաղրյանին պատկանող ՎԱԶ-2106 մակնիշի 57 SS 859 պ/հ փոխադրամիջոցի համար 1998-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 57763 դրամ
2. Դիլիջան քաղաքի Այգեստան փողոցի 2Ա/30 հասցեի բնակիչ Արման Հարությունյանին պատկանող շինության 2005-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 50168 դրամ :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 194

30 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՊԾ-ի «Մնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի շրջանակներում Դիլիջանի համայնքների միության կողմից հաստատվել և ներկայացվել է ծրագիր , որի շրջանակներում պետք է կատարվի Դիլիջան քաղաքային համայնքի Կամարինի փողոցի հեղեղատարի վերանորոգման աշխատանքները: Դիլիջան քաղաքային համայնքի ներդրումը նշված ծրագրին պետք է կազմի 962300 դրամ ՝ նյութերի տեսքով:

Համայնքի մասնակցությունը ծրագրին ապահովելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում կատարել ծրագրով նշված շինարարական նյութերի գնում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ծրագրին համայնքի ներդրումն ապահովելու նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ»/բաժին 4 , խումբ 5, դաս 1, հոդված 5113/ հատկացնել 962300 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՄԱՆԹՐՈՍՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 195

30 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքի կենտրոնական հրապարակն առավել գեղեցիկ դարձնելու համար համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել ձեռք բերել լուսադիոդային ժամացույց – ջերմաչափ , որը հետագայում կտեղադրվի ք.Դիլիջան Մյասնիկյան 66 հասցեի վարչական շենքի տանիքին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և լուսադիոդային ժամացույց – ջերմաչափի գնման նպատակով համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» /բաժին 01 խումբ 01 դաս 01/հոդված 5122 հատկացնել 600000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 196

30 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Մյասնիկյան փողոցի բնակիչները խնդրանքով վերանորոգելու փողոցի կենտրոնական հատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասը:
Ուսումնասիրությունից պարզվել է , որ քաղաքի համայնքային նշանակության Մյասնիկյան փողոցը արտաքին ազդեցությունից ենթարկվել է ֆիզիկական մաշվածության , առաջացել են խորը փոսեր, ինչը խանգարում է ավտոտրանսպորտի և հետիոտնի կանոնավոր և անվտանգ երթևեկությանը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել իրականացնել Մյասնիկյան փողոցի /հատված կմ0+1000 – կմ 1+250/ փոսային նորոգման աշխատանքներ ՝ համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոցի /հատված կմ0+1000 – կմ 1+250/ ճանապարհահատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկի փոսային նորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ»/բաժին 4 , խումբ 5, դաս 1, հոդված 5113/ հատկացնել 976536 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 197

30 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքում բնակիչների առողջության և էկոլոգիայի պահպանության ապահովման նպատակով, ինչպես նաև համայնքում արդյունավետ աղբահանության կազմակերպման նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքում կազմակերպել աղբի տեսակավորման գործողություններ :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19.1-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը, կնքել պայմանագիր համապատասխան կազմակերպության հետ և սահմանել քաղաքի աղբի տեսակավորման իրավունքի համար 100000 դրամ ամսական վճար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՄԱՆԹՐՈՍՅԱՆ*

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 198

30 սեպտեմբեր 2011թ.

«ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ
ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 24-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

«Դիլիջան քաղաքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհել.

1. Դիլիջանի նախկին քաղաքապետ Ժորա Հենրիկի Պետրոսյանին-Դիլիջան քաղաքի զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար:

2.Վախթանգ Կիկաբիձեին-Հայ-Վրացական բարեկամության ամրապնդման գործում ունեցած նշանակալի ավանդի համար :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ՎԱՂԻՆԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ